809

1. Եթե լինեմ ճարտար ու լեզվագետ,
Խոսեմ հրեշտակաց ու մարդկանց բարբառ,
Բայց սեր չունենամ, չսիրեմ հավետ,
Ոչ մի շահ չունեն դրանք ինձ համար:

2. Եթե կյանք վատնեմ՝ հարուստ ու փարթամ,
Եվ մարդիկ սկսեն գովաբանել ինձ,
Լոկ ճարտար խոսեմ, բայց սեր չունենամ,
Ես եղա ծնծղա, ձայն հանող պղինձ:

3. Եթե ստացվածքս տամ աղքատներին,
Եվ մարմինս մատնեմ, որ այրվի,
Սակայն չունենամ սեր աստվածային,
Կյանքս պիտի անցնի առանց մի օգտի:

4. Քաղցր է սերը, անաղարտ ու սուրբ,
Ո՛չ նախանձում է, ո՛չ գոռոզանում,
Նա չի որոնում միայն իր օգուտն,
Այլ ամեն մեկին բարիք է ուզում:

5. Նա ոչ անգութ է, ոչ չարախնդիր
Եվ նա բնավ չի խորհում չարիք,
Նա միշտ սիրում է մարդկանց անխտիր
Եվ կամենում է անել միշտ բարիք:

6. Մեզ ինչպե՞ս սիրեց մեր Փրկիչն ու Տեր,
Թող նույնպես և մենք սիրենք հարատև,
Եվ թող միշտ պահենք հավատք, հույս և սեր,
Բայց սերը մեծ է, քան այլ մի պարգև:

Պատրաստված է Հոգևոր Արխիվի Կողմից | hogevorarchive.com | ergaran.com | 2025